



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019 թ.

ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱԴԵՎՈՍԻ ՄԻԿԻՆՅԱՆԻՆ

ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 1 փող., 25 տ.

Ձեր 10.05.2019թ. թիվ LR8A-6A71-9562-A4B1 դիմումին.

Հարգելի Շ.Միկինյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2018թ. թիվ 424-Ն որոշման պահանջների, Լոռու մարզի գյուղական բնակավայրերում շահառու ճանաչված ընտանիքի, «Գլենդել-Հիլզ» ՓԲ ընկերության և քաղաքաշինության նախարարության /իրավահաջորդ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե/ միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Այսօր մարզում իրականացվում է Հայաստանի Հանրապետության անվանը գրանցված սեփականությունը շահառու ընտանիքներին նվիրատվության կարգով վերադարձնելու գործընթացը, այդ թվում՝ նաև ձեր ընտանիքին, որի կազմում են Շուշանիկ, Մելսիկ, Ռոբերտ, Ռաֆայել և Շուշաննա Միկինյանները: Համաձայն վերը նշված որոշման պահանջների, Դուք մարզպետարան եք ներկայացրել ձեր ընտանիքի չափահաս անդամների անձնագրերի և երեք ծննդյան վկայականների պատճենները: Ձեր տղայի ընտանիքը լրիվ կազմով բացակայում է հանրապետությունից և Ձեր կողմից տրված տեղեկության համաձայն՝ գտնվում է Արխագիայում: Դուք թարգմանության համար նոտարական գրասենյակ եք ներկայացրել Արխագիայում հաստատված լիազորագիր, որը չի ընդունվել, քանի որ Արխագիան Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչված չէ որպես ինքնուրույն պետություն:

Ձեզ առաջարկվել է ներկայացնել լիազորագիր Ձեր տղայի ընտանիքի կողմից, որը կհամապատասխանի ՀՀ օրենսդրության պահանջներին, բացի դրանից հիշեցնում եմ, որ ձեր թոռան՝ Ռոբերտ Մելսիկի Միկինյանի 16 տարին լրանում է 2019 թվականի մայիսի տասնութին և նա պետք է ստանա Հայաստանի Հանրապետության քաղաքացու

անձնագիր: Ինչ վերաբերում է ձեզանից պահանջվող փաստաթղթերի իրավական հիմքերին, հայտնում եմ որ դրանց ցանկը թվարկված է եղել նաև 30.08.2018 թ. ձեզ գրավոր տրված ծանուցման մեջ, որը դուք ստացել և ստորագրել եք Լեռնապատ համայնքի ընդհանուր ցուցակում:

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ